

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ ԵՎ ՍԻՋԻՆ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ամեն մի լեզու անընդհատ զարգանում է: Այդ զարգացմանը զուգընթաց լեզվական իրողությունները փոփոխվում են և կանոնարկվում: Լինելով լեզվի շարունակ փոփոխվող ու զարգացող իրողություններից մեկը՝ պակասավոր բայերը հայերենի զարգացման ընթացքում երբեք նույնը չեն մնացել: Դրանք կրել են զգալի փոփոխություններ՝ լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլում ստանալով համապատասխան ձևավորում: Այս բայերը գալիս են լեզվի պատմության հին շրջաններից և լեզվի զարգացման որոշակի շրջափուլի արդյունք չեն:

Հայոց լեզվի գրային շրջանի զարգացման տարբեր փուլերի գրական արտահայտությունները գրաբարը, միջին հայերենը և աշխարհաբարը, իրենց քերականությամբ սերտորեն կապված են միմյանց: Սակայն նրանցից յուրաքանչյուրն ունի նաև զարգացման հատուկ օրինաչափություններ, որոնցով սահմանազատվում է նախորդ շրջանից:

Հայերենի զարգացման բոլոր փուլերում էլ պահպանվել են բայերի այնպիսի խմբեր, որոնք խոնարհման համակարգով և դերբայների կազմությամբ ամբողջական չեն և դրանով տարբերվում են մնացած բայերից: Նրանց խոնարհման համակարգում կամ պակասում են զանազան ժամանակներ կամ եղած ժամանակներում էլ առանձին դիմավոր ձևեր: Սրանք չունեն նաև որոշ դերբայներ: Այս կարգի բայերը ընդունված է անվանել պակասավոր բայեր:

Տարբեր շրջաններում լեզվաբանները գրեթե նույն ձևով են բնորոշել պակասավոր բայերը:

«Պակասավոր բայք են, որոց ըստ այնր արմատոյ կատարելոյն կամ ներկային ոչ զոն եղանակք ինչ և ժամանակք, և զպակասն իւրեանց յայլմէ ամբողջ բայէ առեալ լրանան»:¹

«Պակասավոր կ'ըստին այն բայերն, որոնց ամէն ժամանակը չի գործածուիր, և որոնց պակասած ժամանակներն ուրիշ բայով կը լրանան կամ կ'ամբողջանան»:²

¹ Ա. Բագրատունի, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 178:

² Ա. Սյրընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջ 79:

«Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնց մի քանի ձևերը չկան կամ գործածական չեն: Պակաս ձևերը սովորաբար լրացվում են նույնանիշ բայերի համապատասխան ձևերով»:³

Պակասավոր բայերի խոնարհման համակարգը ստորև դիտարկելու ենք գրական հայերենի պատմական զարգացման շրջափուլերով:

Սկզբում անդրադարձել ենք պակասավոր բայերի ծագմանը (ըստ Յր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»), տարբեր քերականների կատարած դասակարգման սկզբունքներին, լեզվի զարգացման համապատասխան փուլերում ուսումնասիրել ենք պակասավոր բայերի կրած փոփոխությունները, բերել ենք այդ բայերի խոնարհման հարացույցները և գեղարվեստական գրականությունից համապատասխան օրինակներ:

Պակասավոր բայերի ծագումն ու խոնարհման համակարգի առանձնահատկությունները դիտարկենք հայոց լեզվի զարգացման գրաբարյան շրջափուլում:

Տարբեր քերականներ տարբեր մոտեցումներ են ցուցաբերում գրաբարի պակասավոր բայերի քանակի որոշման և նրանց դասակարգման սկզբունքների հարցում:

Այսպես՝ Ա. Բագրատունին տարբերակում է պակասավոր բայերի երկու խումբ: Առաջին խմբի մեջ մտնում են այն բայերը, որոնց պակասորդ ձևերի փոխարեն գործածվում են նույն նշանակությամբ բայերի համապատասխան ձևերը: Այս խմբի բայերն են արոհ. լուայ. ծանեայ. ունիմ: Մյուս խմբի պակասավոր բայերը «ոչ ուստեք լցուցանեն զպակասն, այլ՝ այսչափ միայն գտանին վարեալ»:⁴

Այս խմբի մեջ մտնում են աառտիմ և օոգ պակասավոր բայերը:

Ստ. Մալխասյանցը իր «Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները» աշխատության մեջ պակասավոր է համարում կեռայ. արոհ. ունիմ. ընդունիմ. հառկանեմ. եմ. գոմ. երթամ. լինիմ բայերը: «Պակասաւոր բայերը չեն. ունենում կամ 1-ին արմատը, կամ 2-րդ արմատը, կամ թեպէտ երկու արմատներն ևս ունին, բայց նրանցից կազմուած որևէ ձև գործածական չէ»:⁵

Ս. Աբեղյանն էլ գրաբարի պակասավոր բայերի շարքը հարստացնում է պիտի «պակասը լրանում է աառտիմ. պիտու. լինիմ», մարթի «պակասը լրանում է մարթսւնամ. մարթեմ. մարթ է բայերով»⁶

³ Դ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 309:

⁴ Տես Ա. Բագրատունի, նշվ. աշխ., էջ 181:

⁵ Տես Ստ. Մալխասեանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները, Թիֆլիս, 1910, էջ 65:

⁶ Տես Ս. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Երևան, 1936, էջ 45-55:

Ի տարբերություն վերոնշյալ քերականների Յր. Աճառյանը պակասավոր է համարում այն բայերը, «որոնց միայն մի քանի ժամանակը կամ միայն մի քանի դեմքն է գործածվում, մնացյալը նույնիսկ անհայտ է: Այս կարգի բայերը իսկական պակասավոր բայեր են»:⁷ Յր. Աճառյանը պակասավոր բայերի թիվը ավելացնում է գրաբարում հազվագյուտ գործածություն ունեցող *բամ*, *կոհմ*, *զոռոծի*, *առնի* բայերով: Գործածական են *բամ* բայի ներկա ժամանակը (առանց հոգնակի թվի 2-րդ դեմքի) և բուն հրամայականի եզակի թիվը: Սիա այդ ժամանակաձևերը՝ ներկա՝ *բամ*, *բաս*, *բաւ*, *բամք*, *բան*, բուն հրամայական՝ *բա*:

«Արանից է կազմված նաև բամբասել բայը, որ բարդված է ներկայի եզակի երկու դեմքերից (= գվռ. *sut-kout*)»:⁸

Գրաբարի որոշ քերականներ էլ անորոշ դերբայի հետ գործածվող եղանակիչ իմաստ արտահայտող բայերն են համարում «եղանակիչ-պակասավոր բայեր»:⁹

Ուսումնասիրելով քերականների դասակարգման սկզբունքները՝ նկատում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը յուրովի մոտեցում է ցուցաբերում գրաբարի պակասավոր բայերի քանակի որոշման հարցում, դասակարգման տարբեր սկզբունքներ է առանձնացնում: Քանի որ այդ բայերի քանակի որոշման և դասակարգման հարցերում տարակարծություններ կան, հետևաբար կդիտարկենք այն պակասավոր բայերը, որոնք ավանդաբար առանձնացվում են լեզվի զարգացման գրաբարյան փուլում:

Գրաբարի պակասավոր բայերն են՝ *ես*, *կայ*, *սպասուել (իմ)*, *զու*, *զոգ*, *չիք*: Անդրադառնանք այս բայերին առանձին-առանձին:

1. *ես* էական բայը առաջացել է «= բնիկ հայ բառ՝ հնիս. *es* «լինել, գոյություն ունենալ» արմատից»:¹⁰ Գործածական են այս բայի միայն սահմանական ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները: Այդ ժամանակաձևերն են՝ ներկա՝ *ես*, *ես*, *է*, *եսք*, *էք*, *եսն*, անցյալ անկատար՝ *էի*, *էիր*, *էր*, *էար*, *էիք*, *էիրք*, առաջին ապառնի՝ *իզեսմ*, *իզեսս*, *իզ*, *իզեսք*, *իզեք*:

«Կան նաև բուն հրամայականի ձևերը՝ *ե՛ր*, *է՛ք* կամ *եռու՛ք*, որոնք առանձին չեն գործածվում, սովորաբար հանդիպում են *ո՛րք եր* (= ո՛րք եղիր), *ո՛րք էր* կամ *ո՛րք երուք* (= ո՛րք եղեք) արտահայտությունների մեջ»:¹¹

Այժմ գեղարվեստական գրականությունից քերենք համապատասխան օրինակներ. «Կկայ *ես* մեզ երկիրն և երկիր, որ ոչ երբեք հեղագցեալ *եսք*

⁷ Տես Յր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ. 4 Ա, Ե., 1959, էջ 337:

⁸ Տես նույն տեղը, էջ 337:

⁹ Տես Յ. Ավետիսյան, Ո. Ղազարյան, Գրաբարի ձեռնակ, Ե., 1992, էջ 170:

¹⁰ Տես Յր. Աճառյան, Գայերեն արմատական բառարան, հտ. 1, Ե., 1971, էջ 25:

¹¹ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնակ, Երևան, 1964, էջ 209:

յարքունի վաստակս, և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան ի գուր և անողորմ եմ հարուածքս ի վերայ մեր»:¹²

«Ի հուր և ի հոգի the մկրտեալք, արդ ի մոխիր և յաճիւն բաթալիցիք. կենդանի մարմնով և անմահ արեամբք the սնեալ...» (Եղիշէ, 55):

«Եթէ ոք կարի առաւելեալ hgt աշխարհական մեծութեանք, և մտօքն աղբատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս...» (Եղիշէ, 14):

Բերված օրինակներուն եմ օժանդակ բայը անցյալ դերբայի հետ կազմել է բաղադրյալ ժամանակներ՝ ներկա (վաղակատար-հարակատար ներկա), անցյալ (վաղակատար-հարակատար անցյալ), ապառնի:

2. Պարտել (իմ) (պետք լինել, պարտավոր լինել, պարտք ունենալ) բայը ծագում է հարս. partu «պարտք» բառից, զնդ. pesa (* < prta) «պարտական, յանցաւոր, մեղաւոր»:¹³ Գործածական են այս բայի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակներն ամբողջությամբ: Այսպես՝ ներկա՝ աատտիմ, աատտիս, աատտի, պարտիմք, պարտիք, պարտիմ, անցյալ անկատար՝ աատտի, աատտիդ, աատտո, պարտաք, պարտիք, պարտիմ, առաջին ապառնի՝ պարտիգիմ, աատտիգիս, պարտիգի, պարտիգիմք, պարտիգիք, աատտիգիմ:

«Թագաւոր ոչ զիրն միայն տացէ աատտիս, այլ և որոց եղև պատճառք ի կորուստ» (Եղիշէ, 15):

«Եւ ոչ միայն զարբանկութիւն հպատակութեան պարտիմք հատուցանել նոցա, այլ և մահու չափ զանձինս ի վերայ դնել սիրոյ թագաւորին» (Եղիշէ, 163):

Այս բայը չպետք է շփոթել աատտի կրավորական բայի հետ, որն ունի խոնարհման ամբողջական համակարգ և նշանակում է «հաղթել, պարտության մատնել»:

3. Կայ (գոյություն ունենալ, կա) բայն ունի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակների եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը: Այսպես՝ ներկա՝ կայ, կան, անցյալ անկատար՝ կայր, կայիմ, առաջին ապառնի՝ կայգ, կայցեն:

Հազվադեպ գործածվում է նաև ներկայի 1-ին դեմքը՝ կամ:

«Արդ երկու իրք կան առաջի ձեր. կամ արարէք բան առ բան նամակիդ պատասխանի, և կամ արիք ի Դուռն եկայք...» (Եղիշէ, 27):

«Եթէ ի կապանս ոք կայգ, արքունի հրամանաւ արծակեալ լիցի. և եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրեն» (Եղիշէ, 85):

¹² Եղիշէ, Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 19:

¹³ Տես Գր. Աճառյան, Աշխ. հտ. 4, Ե., 1979, էջ 68:

«Լեզուն միայն կայր կենդանի ի բերայ նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա» (Եղիշէ, 139):

Այս բայը պետք է տարբերել կայ բայից: «Գրաբարուն կա նաև կայ բայ՝ մնալ, կանգնել նշանակությամբ, որը բոլոր ձևերն ունի և խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով»: ¹⁴ Տարբեր են նաև այս բայերի ժխտականի կազմությունները. կայ պակասավոր բայի ժխտականը կազմվում է չ մասնիկով՝ չկայ. իսկ կայ կանոնավոր բայինը՝ ոչ բառով՝ ոչ կայ:

4. Գոյ (լինել, գոյություն ունենալ) բայը ծագում է «հնիս. yes արմատից. սրա բուն նշանակութիւնն է «մնալ, բնակիլ»: Զնիս. yes կազմուած է նախնական ay «բնակիլ» արմատից՝ -es - ածմամբ, իբր aves. կրճատ՝ yes: Վերի նշանակութիւնները բնաւ համապատասխան չեն հայերէնին, բայց նոյն yes արմատն է»: ¹⁵ Այս բայն ունի ներկա ժամանակն ամբողջությամբ, իսկ անցյալ անկատարն ու առաջին ապառնին միայն 3-րդ դեմքով: Այդ ժամանակաձևերն են՝ ներկա՝ գոյ, գոյ, գոյ, գոյմք, գոյք, գոյն, անցյալ անկատար՝ գոյք, գոյին, առաջին ապառնի՝ գոյաժ, գոյգեմ:

«Զոյս չար ասացեր, գոյն և դէք բարի, գոր և դուք և մեք հրեշտակս անուանեմք. եթէ կամին և դէք բարի լինին, և եթէ կամին և հրեշտակք չար լինին» (Եղիշէ, 31):

«Եւ եթէ սակաւիկ մի հեղգայք, գոյաժ բազում և այլոց աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա» (Եղիշէ, 72):

«Իբրև ոչ որ գոյր առ նոսա քահանայ, դիմէին առ նոսա հիւանդք և ախտածետք քաղաքին...» (Եղիշէ, 196):

Ոսկեդարյան մատենագրության մեջ գործածական են գոյ բայի 3-րդ դեմքերը, այն է գոյ, գոյն, գոյք, գոյին, գոյաժ, գոյգեմ:

5. Գոգ (ասա). «արմատ մի հին, կորած բայի, որից մնում են միայն ապառնիի և հրամայականի մնացորդները: Բնիկ հայ բառ՝ հնիս. voa՝ արմատից»: ¹⁶ Ունի միայն երկրորդ ապառնին (առանց եզակի թվի 1-ին դեմքի), հրամայական եղանակի ներկա և ապառնի ժամանակները կամ բուն և հորդորական հրամայականները: Այսպես՝ երկրորդ ապառնի՝ գոգես, գոգէ, գոգցուք, գոգփք, գոգեմ, բուն հրամայական՝ գոգ, գոգք, հորդորական հրամայական՝ գոգփր, գոգփք:

«Արքայ յղեաց առ քեզ, յուրմէ՛ գտեալ է քո գայդ ամենայն պատուական պատիւդ, գոգ ինձ վաղվադակի, վասն որո՞յ արդար վաստակոց» (Եղիշէ, 107):

Այս պակասավոր բայը հազվադեպ է հանդիպում:

¹⁴ Տես Ա. Աբրահամյան, *Ոճվ. աշխ.*, էջ 211:

¹⁵ Տես Զր. Աճառյան, *Ոճվ. աշխ.*, հտ. 1, էջ 576:

¹⁶ Տես Նույն տեղը, էջ 570:

6. Հիք (չկա) պակասավոր բայը «իք բառի բացասականն է «չկայ» (իբրև բայ): = Կազմուած է *ի < հնիւ. կ - դերանվանական արմատից ք մասնիկով, ճիշտ ինչպես ունինք ոք ո արմատից՝ ք մասնիկով. ոք – յատուկ է շնչաւորներին, իք՝ անշունչներին»:¹⁷ Այս բայն ունի միայն այս ձևը, որը շատ գործածական է:

«Ես եմ Աստուած, և չիք այլ քո բաց յինն, և ոչ զկնի իմ այլ ոք լիցի Աստուած...» (Եղիշէ, 56):

«Իսկ եթէ սա ծանծրացեալ իցէ ելանել յախտալից մարմնոյս, առաւել ևս մեք ամենեքեան. զի չիք ոք ամենկին ի ծնունդս կանանց...» (Եղիշէ, 170):

Այժմ անդրադառնանք միջին հայերենի պակասավոր բայերի խոնարհման համակարգի առանձնահատկություններին: Տեսնենք, թե այդ բայերը ինչ փոփոխություններ են կրել հայոց լեզվի զարգացման այս շրջափուլում:

Միջին հայերենը ինչքան էլ անցումային մի օղակ լինի, ունի իր քերականական համակարգը: Թեև դեռ շարունակում են պահպանվել գրաբարի քերականական համակարգի շատ իրողություններ, բայց դրան զուգահեռ միջին հայերենը ձևավորում է իր քերականական համակարգը, որն ավելի մոտ է աշխարհաբարին, քան գրաբարին:

Գրաբարից միջին հայերենն անցման շրջանում կատարված քերականական իրողությունների քայքայումն իր արտահայտությունն է գտել նաև միջին հայերենի պակասավոր բայերի խոնարհման համակարգում: Մեր լեզվի այս շրջանում գրաբարի ստորադասական եղանակի բայածների գործածությունից դուրս գալուն համապատասխան են, կայ, պատուել(իմ), գոյ, գոգ բայերի ստորադասական եղանակի կիրառություններն այլևս չեն հանդիպում: են, կայ, պատուել բայերը հանդես են գալիս միայն սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակներով: «Գրեթե չեն օգտագործվում գոյ և գոգ պակասավոր բայերը. առաջինը փոխարինված է լինել բայով, իսկ երկրորդը, ինչպես հայտնի է, գրաբարում մեծ մասամբ երկրորդ ապառնի ժամանակով էր օգտագործվում»:¹⁸

Գեղարվեստական գրականության մեջ երբեմն հանդիպում են գոյ պակասավոր բայի ներկա ժամանակի գրաբարյան ձևերի կիրառության դեպքեր: Այսպես, օրինակ՝

...Օընունդ միշտ էին, որով եղեն գոյք յանգոյից...¹⁹

Միջին հայերենը զարգացման իր ներքին օրենքներն ունի, որոնցով կատարելագործվում և հղկվում էր անընդհատ: Լեզվի այս շրջանում արդեն ուրվագծվում են հայերենի նոր որակի տարրերը:

¹⁷ Տես Մույն տեղը, հտ. 3, Երևան, 1977, էջ 255:

¹⁸ Տես Ավնարկներ միջին գրական հայերենի պատմության, հտ. Ա, Ե., 1972, էջ 352:

¹⁹ Տես Ն. Շնորհալի, Տաղեր և գանձեր, Ե., 1987, էջ 236:

Այսպիսով, գրաբարի պակասավոր բայերի փոփոխությունները միջին հայերենում կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

1. Եմ բայն ունի սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները ամբողջությամբ: Այդ ժամանակաձևերն են՝ ներկա՝ եմ, ես, է, ենք (ենք), էք, են, անցյալ անկատար՝ էի, էիր, էր, էաք, էիր, էին:

Բերենք համապատասխան օրինակներ.

Դուք քան զաստղ պայծառ էք, / Վարդ և կնդրուկ հոտ առէք,

Քաղցր ծայնիս բարբառէք / Այսօր ուրախության օր է ...²⁰

Ստեփան, խիստ ես ծուռն, / Տերտերին պահել էիր մեկ ճուռն ... (ՆՅ, 145)

2. Պատուել (պարտավոր լինել). գործածական են այս պակասավոր բայի սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակները: Այսպես՝ ներկա՝ պատուիմ, պատուիս, պատուի, պատուիմք, պատուիք, պատուին, անցյալ անկատար՝ պատուեի, պատուեիր, պատուեաք, պատուեիր, պատուեին: Ինչպես՝ Պատուիմք աշխատողացն ողորմի տալ մեկ քերան... (ՆՅ, 90)

Պատուիք ընտրել զարբութիւնս, մերժել ի մենջ զչարիս.

Ածէք, խմէք կարմիր գինի, խմողն ուրախ լինի... (ՆՅ, 91)

3. Կայ (գոյություն ունենալ, կա) բայն ունի միայն սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակների եզակի և հոգնակի 3-րդ դեմքերը՝ ներկա՝ կայ, կան, անցյալ անկատար՝ կայր // կայր, կային:

Աստված սիրէք, ում ստուում որ նախանձ կայ հանի... (ՆՅ, 93)

Ծեծեին զիս, հարկանեին անհնարին տագնապէին.

Բայց այսօրիւք ոչ կարացին յաղթել քաջացն, որ յիս կային: (ՆԸ, 110)

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լեզվի զարգացման այս շրջանում արդեն նկատելի են դառնում լեզվական իրողությունների պարզեցման միտումները և հայերենի նոր որակի տարրերի ձևավորումը:

Բայերենի զարգացման աշխարհաբարյան փուլը, լեզվի նախորդ շրջանների հետ կապվելով հանդերձ, բնորոշվում է յուրահատուկ օրինաչափություններով և առանձնահատկություններով: Գրաբարի պակասավոր բայերից և՛ միջին հայերենում, և՛ արևելահայ, և՛ արևմտահայ գրականներում իրենց գոյությունը շարունակում են պահպանել միայն եմ, կայ պակասավոր բայերը, իսկ ապատուել(իմ) բայը հանդես է գալիս միայն միջին հայերենում և արևմտահայերենում: Գրաբարի մյուս պակասավոր բայերը լեզվի պատմական զարգացման ընթացքում դուրս են եկել գործածությունից:

Բայերենի պատմական զարգացման ընթացքում մեր գրական լեզուներից յուրաքանչյուրն արդեն իր հերթին ձևավորում է սեփական պակասավոր բայերի համակարգը:

²⁰ Տես Ն. Գովնաթան, Տաղեր, Ե., 1983, էջ 86: